ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

<<13>> <<փետրվարի>> 2019թ. N 45

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի չորրորդ մասի պահանջները, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 4-ից մինչև փետրվարի 13-ը ընկած ժամանակահատվածի ընդունած որոշումները /թիվ16-18/:

Համայնքի ղեկավարը կարգադրություն չի արձակել :

Առդիր 3 /երեք/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1139 համայնք Մերձավան Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1, հեռ. (096) 11-00-44, էլ. փոստ merdzavan.armavir @ mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

4 փետրվարի 2019 թվականի N16-Ա

ՀԱՄԵՐԳԻ ՏՈՄՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի երկրորդ մասի, 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N65-Ն որոշումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2019թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով նախատեսված գումարից 60 000 ՀՀ դրամ փոխանցել <<Ալմաստ մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպությանը՝ ձեռք բերելու 2019 թվականի փետրվարի 7-ին կայանալիք համերգի տոմսեր՝ 20 հատ 3000 դրամ արժողության և տրամադրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակիցներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի փետրվարի 4

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

5 փետրվարի 2019 թվականի N17-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ~~Մերձավան~~ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը , **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Արարատ Հարությունի Քառյանին** տրամադրել 100 000ՀՀ դրամ դրամական օգնություն հոր՝ **Հարություն Արտավազդի Քառյանի** մահվան համար / մահացել է 03.01.2019թ., հիմք մահվան վկայական ԲԱ070627, տրված 10.01.2019թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից /:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի փետրվարի 5

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2019 թվականի N18-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով 2017 թվականի օգոստոսի 30-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրման պայմանագրի 8.2.2 կետը և 2019 թվականի փետրվարի 12-ին <<ՍԱՆԷՆԵՐՋԻ>> ՍՊ ընկերության թիվ 6 գրությունը, **որոշում եմ.**

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 15-ի N46-Ա որոշման հիման վրա <<ՍԱՆԷՆԵՐՋԻ>> ՍՊ ընկերության, ի դեմս տնօրեն Ռուբեն Կարենի Գաբրիելյանի հետ 2017 թվականի օգոստոսի 30-ին 4.4421 հեկտար հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրման կնքված պայմանագիրը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հիմք ընդունելով լուծված պայմանագիրը, համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի փետրվարի 13

հ. Մերձավան